# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հոկտեմբերի 7-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (Տե՛ս էջ 64):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հոկտեմբերի 14-ին, կիրակի.- Ե. կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբղ. Սարոյանը:

***Հոկտեմբերի 21-ին, կիրակի.- Զ. կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գեղարդ աբղ. Վահունին: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հոկտեմբերի 28-ին, կիրակի.- Է. կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբղ. Մալխասյանը: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր մեր»-ից առաջ «Որ փափագելի փենչմամբ եկեալ ի քաղաքն Երուսաղէմ ասպուածաւէր դշխոյն խնդրէր զփայտ խաչին» բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ հոկտեմբերի 27-ի զոհերի հիշատակին:

***Նոյեմբերի 4-ին, կիրակի.- Ը. կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Պատրիարք Սրբազան Հայրը «Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն» (Ղուկ. Ը 21) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Նոյեմբերի 10-ին, շաբաթ.- Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:*

Այսօր Մայր Տաճարում, Հրեշտակապետաց Խորանի Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

*Նոյեմբերի 11-ին, կիրակի.- Թ. կիրակի զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը: Պատարագիչ Սրբազան Հայրը «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Նոյեմբերի 18-ին, կիրակի.- Ժ. կիրակի զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Նոյեմբերի 25-ին, կիրակի.- Ա. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագիչ Սրբազան Հայրը «Հայր մեր»-ից առաջ «Ամէն ասեմ ձեզ. զի հոգի առաւել է, քան զմարմին» (հմմտ. Ղուկ. ԺԲ 23) բնաբանով քարոզ խոսեց (Տե՛ս էջ 58):